

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Հոդվածում քննարկվում են Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակը, հարկային նոր քաղաքականության իրականացման մեխանիզմները, ինչպես նաև դրանց արդյունավետության մեծացման հիմնախնդիրները:

ՀՀ ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակը դրականորեն կարող է կտրուկ փոխվել միմիայն արմատական և համակողմանի բարեփոխումների ճանապարհով: Ընդ որում, հիմնական քաղաքական ուժերը և ժողովուրդը պետք է հավատան և աջակցեն այդ բարեփոխումներին, այլապես ցանկալի արդյունք չի լինի:

Հիմնաբառեր. գործազրկություն, նվազագույն աշխատավարձ, ներդրումային միջավայր, արդյունաբերական քաղաքականություն, արտահանման ծավալ, սոցիալական կայունություն

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ներկա վիճակը կարելի է գնահատել որպես հետձգնաժամային: Հենց դրա մասին են վկայում ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալները սոցիալական ոլորտի վերաբերյալ (աղքատության մակարդակ՝ 32%, գործազրկություն՝ 18.6%, նվազագույն աշխատավարձ՝ 50 հազ. դրամ և այլն), նաև զուտ տնտեսական ցուցանիշները (ՀՆԱ աճ՝ 3.5%, տնտեսական ակտիվության աճ՝ 3.5%, արդյունաբերական, գյուղատնտեսական և այլ ոլորտների արտադրանքի աճի դանդաղում, օտարերկրյա և տեղական ներդրումների ծավալի շեշտակի անկում, առևտրի մանրածախ օբյեկտների թվի կրճատում և այլն):

Փաստորեն, առաջիկայում ևս, ինչպես և տարիներ շարունակ հանրապետության տնտեսական և ներդրումային միջավայրը լուրջ բարելավման կարիք է զգալու:

Որո՞նք են իրադրության հիմնական պատճառները:

Կարծում ենք՝ խնդիրը ոչ այնքան մասնագիտական, որքան քաղաքական որոշումների և լուծումների դաշտում է: Ներդրողի համար կարևորը իր կատարած ներդրումների անվտանգության երաշխավորումն է: Երաշխիքները պետք է լինեն ինչպես իրավական և օրենսդրական, այնպես էլ վարչարարության տեսանկյուններից:

Իրավաօրենսդրական բնագավառից առանձնացնենք երկու ուղղություն՝ արդյունաբերական քաղաքականության իրականացում և մրցակցային հարաբերությունների կատարելագործում: Նախ արձանագրենք, որ աշխատանքի միջազգային բաժանման շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը մասնագիտացված է եղել հենց արդյունաբերության, մասնավորապես՝ դրա մի շարք ենթաձյուղերի գծով: Վերջիններս աշխատատար և գիտատար արտադրություններ էին՝ սարքաշինություն, էլեկտրոնային և էլեկտրատեխնիկական արտադրանքներ, քիմիական և լեռնահանքային արդյունաբերություն: Թե ինչ եղան հարյուրավոր խոշոր ձեռնարկություններ, բոլորիս է հայտնի: Սակայն առաջիկայում ի՞նչ պետք է անել:

Հայտնի է նաև, որ անցած 4–5 տարիների ընթացքում Կառավարությունը ծրագրել էր զարգացնել արտահանմանը միտված արդյունաբերական արտադրությունը: Եվ ի՞նչ եղավ: Այդ ծրագրերը, փաստորեն, հիմնականում մնացին թղթի վրա: Այդ մասին է վկայում ՀՀ արտահանման ծավալների՝ անցած 3–4 տարիների ընթացքում արձանագրված գրեթե նույն մակարդակը՝ 1.3–1.4 մլրդ ԱՄՆ դոլար տարեկան, ինչպես նաև արտահանվող արտադրատեսակների տեսականու սահմանափակությունը, արտահանման ներուժի և կարողությունների աճի դանդաղումը:

Մեր կողմից 2014 թ. մշակվեց և ԱԺ քննարկմանը ներկայացվեց «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ մայր օրենքի նախագիծը:

Համաձայն այդ օրենքի՝ ՀՀ-ում պետք է գործի արդյունաբերական պետական ծրագիր, որում հստակ սահմանված լինեն կառավարության ղեկավարից մինչև մարզպետների ու համայնքապետների համապատասխան իրավունքներն ու պարտականությունները արդյունաբերական քաղաքականության իրագործման վերաբերյալ: Մասնավորապես՝ ծրագիրը պետք է բաղկացած լինի մարզային համապատասխան ծրագրերից, հարկ է ՀՀ պետական բյուջեի ֆինանսական միջոցներից անհրաժեշտ հատկացումներ կատարել դրա իրականացման համար: Դա վերաբերում է արտահանմանը միտված արդյունաբերական արտադրանքի սուբսիդավորմանը, ապրանքների՝ միջազգային շուկաներում դիրքավորմանը և առաջնղմանը, ցուցահանդեսների, վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը, արտաքին տնտեսական գործունեության աջակցմանը, նորարարական գործընթացների խրախուսմանը և այլն:

Միաժամանակ՝ օրենքի անկյունաքարային ուղղությունն է նաև արդյունաբերական գոտիների ձևավորումը: Արդյունաբերական գոտին այնպիսի տարածք է, որտեղ առկա են անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ ճանապարհ, երկաթուղի, լոգիստիկ համակարգ, պահեստներ, սառնարանային տնտեսություն, գազ, էլեկտրաէներգիա և այլն: Գոտում գործում են իրավա-

բանական և մարքեթինգային ծառայություններ, ազատ տնտեսական գոտու ռեժիմ, այլ հարկային արտոնություններ ևս: Գոտին ունի կազմակերպիչներ, ովքեր ընտրվում են մրցույթով, կան նաև գոտին շահագործողներ:

Այսպիսի գոտիների կազմակերպումը հատուկ է մի շարք օտարերկրյա պետությունների՝ անկախ դրանց տնտեսական զարգացման մակարդակից:

Փոքր, միջին, ինչու չէ՝ նաև խոշոր ապրանք արտադրողի համար, փաստորեն, լուծված են բազմաթիվ խնդիրներ՝ սկսած արտադրության սպասարկումից մինչև արտադրանքի իրացում և մարքեթինգի կազմակերպում:

Ուստի իշխանությունը պետք է փորձնական, «պիլոտային» եղանակով ցույց տա հավանական ներդրողներին, որ այս միջավայրում արտադրություն կազմակերպելը և շահույթ ստանալը իրատեսական է: Այդպիսի քաղաքականություն հանրապետությունում իրականացվում էր 2002–2007 թթ. շինարարության ոլորտում, երբ տարեցտարի այս բնագավառում ներդրումների ծավալն աստիճանաբար աճեց, քանի որ շինարարության մեջ ներդրումներ կատարելը շահավետ էր ու շահութաբեր:

Սակայն հետագայում դրանք որակվեցին որպես շինարարական «փուլիկներ», ինչն, ըստ իս, անընդունելի է, քանի որ միշտ էլ միևնույն շահութաբերությամբ և պայմաններով անհնար է գործարարություն իրականացնել. չէ՞ որ տարիների ընթացքում մեծանում են ծախսերը, փոխվում է սպառողական պահանջարկը: Ուստի որոշակի ժամանակահատվածում աշխատած գումարները միշտ էլ պետք է պատրաստ լինել ներդնելու նոր, այլ ոլորտներում: Դա էլ հենց նորարարության խնդիրն է՝ ճիշտ ժամանակին ընդունել արդյունավետ որոշումներ, չդառնալ մասնավոր շահույթներ աշխատելու «գերին»:

Դա, իհարկե, հեշտ լուծվող խնդիր չէ, որովհետև մարդն իր բնույթով առավելապես պահպանողական է: Գործարարը պետք է մշտապես լինի ամենալայն շփումների մեջ, ունենա խորհրդականներ և իր վրա վերցնի ռիսկային որոշումները:

Այսպիսով՝ ՀՀ-ում ներդրումների ներգրավման կարևորագույն պայմանը դրանց անվտանգության երաշխիքների առկայությունն է:

Ժամանակակից տնտեսագիտության մեջ գերարդիական են նաև ներդրումների ազդեցության ճշգրիտ կանխատեսումը և գնահատումը, օրինակ՝ ՀՆԱ տնտեսական աճի կամ տնտեսական ակտիվության աճի վրա: Փաստորեն, ներդրումների ներգրավման գործընթացում շահագրգիռ են ինչպես տնտեսավարողները, այնպես էլ պետությունը և սպառողները: Ուստի այդ եռանկյունու ճիշտ համադրումը և ընկալումը պետության խթանող քաղաքականության արդյունքը պետք է լինեն:

Պետությունը պետք է վարի արդյունավետ և հասկանալի ներդրումային քաղաքականություն, իսկ ներդրումներն այսօր առավել արդյունավետ են, եթե դրանց նպատակադրումը նորարարությունն է: Նորարարական ներդրումների խթանումը պետության կողմից, մասնավորապես՝ հարկային արտոնությունների, մատչելի վարկերի, պետություն–մասնավոր հատված համարժեքության միջոցով պետք է դառնա պետական համապատասխան քաղաքականության առանցքը:

Անհրաժեշտ է էապես կրճատել ապրանքի կամ ծառայության նորաստեղծական գործընթացի տևողությունը, ուստի հաջորդ կարևորագույն խնդրի լուծումը սերտորեն կապված է գիտության (հատկապես՝ կիրառական) համարժեք ֆինանսավորման և կառավարման հետ:

Հայտնի է, որ մեր հանրապետությունում գիտության ֆինանսավորումը կազմում է ՀՆԱ ընդամենը 0.26%-ը: Դա անբավարար է: Հաճախ պատճառաբանվում է, թե չկան այլ աղբյուրներ ֆինանսավորման համար: Հարկ է, որ գիտության ոլորտի ղեկավարները, ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչները հիմնավորեն, թե որքան ներդրումներ են անհրաժեշտ մեր գիտությանը որոշ ժամանակ անց ցանկալի արդյունքներ ստանալու համար: Արդյոք կա՞ն այդպիսի հիմնավորումներ, թե՞ գերակայող է հետևյալ միտքը. գիտության արգասիքը կարող է կիրառվել, ասենք՝ 50 կամ 100 տարի հետո: Կարծում ենք՝ կարող է և այդպես լինել, սակայն մենք ժամանակ չունենք, դա, թերևս, շրայլություն կարելի է համարել մի երկրի համար, որտեղ 1 շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմում է ընդամենը 3400 ԱՄՆ դոլար:

Այս ոլորտում պետության դերը նույնպես հստակ պետք է լինի. խթանել մասնավոր հատվածի՝ գիտությանը նպատակաուղղված ներդրումները:

Ժամանակին ոմանք պնդում էին, թե գիտությունը զարգացնելու համար անհրաժեշտ է ձևավորել պետական կառավարման մարմին՝ գիտության պետական կոմիտե, և ամեն ինչ ավելի լավ կլինի: Այժմ պետք է վերլուծել, թե ինչպիսի՞ն է գիտության վիճակը վերոնշյալ կոմիտեն ստեղծվելուց հետո:

Հայաստանի Հանրապետության տնտեսական կարևորագույն խնդիրներից են տնտեսական մրցակցությունն ու հակամենաշնորհների քաղաքականությունը:

Ակնհայտ է, որ ՀՀ-ում ազատ և արդար ձեռնարկատիրական մրցակցային միջավայրը աղավաղված է, որը պատճառ է դառնում տարբեր շուկայական մոդելներից տնտեսավարողների դուրսմղմանը:

Այս խնդրի լուծման շուրջ մեր հանրապետությունում առաջին տարին է, որ քննարկումներ և բանավեճեր են տեղի ունենում: Սակայն, ինչպես ասում են՝ «սայլը տեղից չի շարժվում»:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ են և՛ օրենսդրական, և՛ վարչարարական, և՛ քաղաքական լուծումներ:

Ինչ վերաբերում է Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գործառնություններին, ապա պետական այս կառույցն իր իրավասության շրջանակներում գործում է, այլ խնդիր է, թե ի՞նչ մակարդակի լիազորություններ պետք է ունենա:

Գերիշխող դիրքի չարաշահումը շատ արագ կարելի է և կանխել, սակայն դրանով հարցը չի լուծվում: Կան խմբատիրային և մենաշնորհային բազմաթիվ պայմանավորվածություններ, որոնք առանց լուրջ հետաքննական և քաղաքական միջամտության անհնար է հաղթահարել: Նույնիսկ ՀՀ վերահսկիչ պալատի ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված բազմաթիվ փաստեր մնացին անհետևանք, խմբատիրական պայմանավորվածությունները, որոնք հանգեցնում են գների չհիմնավորված աճի և գերշահույթի, իրավական ակտի կամ օրենքի դրույթի խախտման հետևանք չեն առաջին հայացքից միայն:

Հետևաբար՝ նախ անհրաժեշտ է ընդունել հակամենաշնորհային օրենսդրություն, որը ՀՀ-ում բացակայում է, երկրորդ՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին հարկ է օժտել համապատասխան լուրջ լիազորություններով՝ նոր օրենքի ընդունմամբ, երրորդ՝ պետք է ցուցաբերել քաղաքական կամք առաջին և երկրորդ պահանջների կատարման համար:

Այսօր մեր հանրապետությունում, թերևս, փոքր ձեռնարկությունների՝ միջին, իսկ միջինների՝ խոշոր դառնալու հնարավորություններ չկան: Խոշորը, փաստորեն, ավելի է խոշորանում, իսկ փոքրն ու միջինը լուծարվում են:

Դրա վառ օրինակներից են նաև առևտրի ոլորտի ձեռնարկությունների թվի համադրությունը 3–4 տարիների ընթացքում և, իհարկե, խոշոր, այսպես կոչված, «մուլերի» ձևավորումը Երևանում: Օրենսդրական որոշ նախաձեռնություններ առկա են խոշոր և փոքր մանրածախ առևտրի օբյեկտների գործունեության կարգավորման և տեղաբաշխման առումով, սակայն դրանք դեռևս կյանքի չեն կոչվել:

Նույնը վերաբերում է նաև «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթների կիրառման շրջանակներում փաստաթղթավորման պահանջի՝ ՓՄՁ-ների համար պարտադիր լինելուն: Եվ պատահական չէ այդ ոլորտի հանրության ընդվզումը, որի հետևանքով ՀՀ Կառավարությունը հետաձգել է օրենքի փաստացի գործադրումը մինչև 2015 թ. փետրվարի 1-ը:

Այս առումով, չենք կարող չնշել նաև 2015 թ. հունվարի 1-ից Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ) ՀՀ անդամակցության մասին, որի շրջանակներում, այդ օրվանից սկսած, ՀՀ-ում կգործեն համապատասխան մաքսային օրենքներ: Ինչպիսի՞նք կլինի այդ պարագայում իրադրությունը ՀՀ սպառողական շուկաներում: Կան և՛ դրական, և՛ բացասական կանխատեսումներ: Դրականն այն է, որ ՀՀ արտահանողներն առանց սերտիֆիկացման, առանց ավելորդ մաքսային քաշքշուկների իրենց արտադրանքը կարտահանեն: Հաճախ նշվում է, որ ՀՀ-ն անմիջական սահման չունի ԵՏՄ-ի հետ: Կարծում ենք՝ Կրաստանի տարանցիկ փոխադրումները որևէ լուրջ խնդիր չեն առաջացնի, քանի որ վերջինս իր հետաքրքրություններն ունի տրանզիտային վճարների առումով: Իսկ ծառայությունների, կապիտալի և աշխատուժի արտահանման համար սահմանի անմիջական առկայությունը ուղղակիորեն նշանակություն չունի:

Ինչ վերաբերում է բացասական հետևանքներին, ապա մի շարք «զգալուն» ապրանքների առնչությամբ, կարծում ենք՝ կլինեն գնաճային սցենարներ, իսկ դեպի ռուսական շուկա արտահանման ծավալների աճի հետ կապված, պետք է նշել, որ ՀՀ արտադրողները այնքան էլ պատրաստ չեն լրացուցիչ արտադրանք թողարկելու: Այդ դեպքում անհրաժեշտ են մատչելի պայմաններով վարկային միջոցներ և արտահանման կարողությունների ընդլայնում: Մեր արտադրողները՝ հատկապես գյուղատնտեսական մթերքի արտադրությամբ զբաղվող տնտեսավարողները (վերամշակման մասով), արդեն ունեն լուրջ դժվարություններ:

Եվ, վերջապես, մաքսատուրքերի աճը, նաև երրորդ երկրներից մեր հանրապետություն ապրանքների ներկրման պարագայում, կհանգեցնի այդ երկրների՝ որոշ դեպքերում փոխհատուցման պահանջների առաջադրմանը ՀՀ-ին: Սա դեռևս մնում է չլուծված հարց:

Ինչ վերաբերում է ՀՀ պետական բյուջե մաքսատուրքերի վճարմանը, ապա նախատեսվում է տրամադրել 1.13% (26 մլրդ ԱՄՆ դոլար) ընդհանուր մաքսային մուտքերի պարագայում ԵՏՄ-ի համար, ՀՀ-ի դեպքում դա կկազմի շուրջ 300 մլն ԱՄՆ դոլար: Նշենք, որ 2013 թ. ՀՀ պետական բյուջե էր վճարվում շուրջ 105 մլն ԱՄՆ դոլար մաքսատուրք: Այսպիսով՝ այս առումով, ՀՀ-ն մոտ երեք անգամ աճ կունենա: Սակայն այս դրական արդյունքը պարզունակ

կլինի բացարձակ թվով գնահատելը. հարկ է ԵՏՄ մաքսային միջավայրը գնահատել համալիր ձևով:

Ամփոփելով նշենք, որ ՀՀ տնտեսությունը, հանրությունն այսօր կանգնած են նոր մարտահրավերների հաղթահարման առջև, որոնք ավելի են թեժանում, քանի որ աշխարհում մրցակցությունը և հետձգնաժամային ազդեցությունները ավելի ծանր են տանում փոքր տնտեսություն ունեցող պետությունները, որոնցից է նաև ՀՀ-ն:

Առկա դժվարությունները կարելի է հաղթահարել միմիայն պետության ներքին քաղաքական և տնտեսական, սոցիալական կայունությամբ, ժողովրդավարության իրական արժեքների արժևորմամբ և քաղաքական կամքի դրսևորմամբ:

МИКАЕЛ МЕЛКУМЯН

*Заведующий кафедрой „Микроэкономики и организации предпринимательской деятельности“ АГЭУ,
доктор экономических наук, профессор*

Новые вызовы экономической и общественной жизни Республики Армения.- В статье рассматривается социально-экономическое положение в Республике Армения, новые механизмы реализации налоговой политики, а также вопросы повышения эффективности налоговой политики.

Нынешняя экономическая и социальная ситуация может резко измениться в положительном смысле только путем радикальных и всеобъемлющих реформ.

Более того, основные политические партии и народ должны верить и поддерживать эти реформы, в противном случае они не будут иметь желаемого результата.

MIKAYEL MELKUMYAN

*Head of the Chair of „Microeconomics and Entrepreneurial Activities“ at ASUE,
Doctor of Economics , Professor*

The New Challenges of Economic and Social Life of the RA.- The article discusses the socio-economic situation in the Republic of Armenia, the new tax policy implementation mechanisms, as well as increasing the efficiency of tax policy issues.

The current economic and social situation can be changed drastically in the positive sense of the word only by means of radical and comprehensive reforms. Moreover, the major political parties and the people must believe and support the reforms, otherwise they will not have the desired result.